ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2026 Թ. ՄԱՐՏԻ 27-Ի ԹԻՎ 12 ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. Ավարտական աշխատանքների ընթացքի մասին ամբիոնների վարիչների հաղորդումները:
2. Մագիստրոսական և բակալավրիական ուսումնական ծրագրերի վերանայում և հաստատում:
3. «Դասախոսը ուսանողի աչքերով» սոցոլոգիական հարցումների արդյունքների քննարկում (1-ին կիսամյակի արդյունքների քննարկում)
4. Ընթացիկ հարցեր:

Նիստի նախագահ Ա.Ս.Գալստյան – Հարգելի գործընկերներ գիտխորհրդի աշխատանքային օրակարգը բոլորիդ ուղարկված էր. Առաջարկություններ կամ փոփոխություններ ունեք՞ :

Հ.Գ.Խաչատրյան- առաջարկում եմ դնել օրակարգը քվեարկության և անցնել աշխատանքի:

Գիտական խորհրդի աշխատանքնային օրակարգը ընդունվեց՝ ներկայացված հարցերով:

Ա.Ս. Գալստյան- լսենք ամբիոնի վարիչների հաղորդումը ավարտական աշխատանքի ընթացքի մասին:

Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ն.Ա.Դուրգարյան

Օրգանական քիմիայի ամբիոնում միայն մեկ ավարտական աշխատանք ունենք Սննդի քիմիա ԿԾ և մագիստրոսական թեզեր. Աշխատանքները ընթանում են նորմալ հունով, գրեթե ավարտված են և զուգահեռ ձևակեպվումն է ավարտական աշխատանքը:

Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ, դոցենտ- Ա.Ի. Մարտիրյան

Ավարտական աշխատանքների ընթացքը նորմալ է, խնդիրների չկան:

Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ, դոցենտ – Գ.Ս.Գրիգորյան

Ամբիոնում իրենց ավարտական աշխատանքն են կատարում 5 ուսանող՝3-ը «Քիմիա» ԿԾ-ից և 2-ը «Սննդի անվտանգություն» ԿԾ-ից: Աշխատանքները ընթանում են նորմալ հունով, խնդիրներ չկան:

-Ա.Ս.Գալստյան, - Հարգելի գործընկերներ, ֆիքսեք և եղեք հետևողական

1.-«Սննդի քիմիա» ԿԾ ավարտական աշխատանքների նախնական պաշտպանությունը տեղի կունենա մայիսի 13-ին և մայիսի 27-ին՝ պատպանությունը:

2. – « Քիմիա» ԿԾ ուսանողների նախնական պաշտպանությունը տեղի կունենա մայիսի 15-ին, իսկ պաշտպատությունը՝ մայիսի 29-ին:

3. « Նյութագիտություն.» մագիստրոսական ծրագրի, մագիստրոսական թեզերի նախնական պաշտպանությունը տեղի կունենա մայիսի 15-ին, իսկ պաշտպատությունը՝ մայիսի 29-ին:

Նախապաշտպանությունից մեկ շաբաթ հետո աշխատանքները կազմված, վերջնական տեսքով պետք է հանձնել հանձնաժողովի անդամներին ծանոթանալու՝ բազմաբաղադրիչ գնահատման համար: Գրախոսի և ղեկավարի կարծիքները այդ փուլում անհրաժեշտ չեն, կարծիքները կարող եք ներկայացնել գրասենյակ պաշտպանությունից 2 օր առաջ:

Ա.Ս.Գալստյան – Ուշադրություն դարձրեք գրախոսական իստիտուտի վրա. Այստեղ խնդիրը ավելի հրատապ է. Գրախոսը պետք է լուրջ անդրադառնա աշխատանքի դիտարկմանը՝ աշխատանքի արդիականությունը, նպատակը, նորույթը, փորձերի ընթացքը՝ քանզի նա պատասխանատու է ներկայացված կարծիքի համար: Ամբիոններում գրախոսության համար թողեք թափուր ժամեր՝ գրախոսների վճարելու համար:

Ա.Ս.Գալստյան,- Քիմիայի ֆակուլտետի դեկան

Այժմ անդրադառնանք օրակարգի երկրորդ հարցին. Մագիստրոսական և բակալավրիական ուսումնական ծրագրերի վերանայում և հաստատում:

«Քիմիա» մագիստրոսական ծրագրի ղեկավար, պրոֆեսոր Ն.Ա.Դուրգարյան

Մագիստրոսական ծրագրում այս տարի փոփոխություններ չի նախատեսվում, սակայն մյուս տարի դեկտեմբերին կներկայացնենք մագստրասական նոր ծրագրի սևագիր տարբերակը ԲԿԳԿ-ի կանոնադրությանը համապատասխան: Այս փաթեթը պետք է անցնի արտոնագրման բոլոր փուլերը:

«Քիմիա» և «Սննդի անվտանգություն» կրթական ծրագրերում ունենք որոշակի փոփոխություններ, որը կներկայացնեմ: Իրականացված փոփոխությունները քննարկված են եղել համապատասխան ծրագրերի ղեկավարների հետ.

Քիմիայի ֆակուլտետի դեկան Ա.Ս.Գալստյանը նշեց որ որ Քիմիայի ֆակուլտետի «Քիմիա» ԿԾ և «Սննդի անվտանգություն» ԿԾ բակալավրիատի 2026-2030 ուստարվա ուսումնական պլաններում անհրաժեշտ է կատարել որոշակի փոփոխություններ՝ հիմնվելով Քիմիայի ֆակուլտետի կրթական ռազմավարության և ուսումնական գործընթացը լավարկման վրա: Ներկայացվող փոփոխությունները քննարկվել են սպասարկող ֆակուլտետների համապատասխան ամբիոնների վարիչների հետ:

Առաջարկվող փոփոխությունների հետևյալն են, ընդհանուր կրթական կառուցամաս (պարտադիր) կրթաբլոկից նախատեսված երկու կիսամյակ «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» (2*2կրեդիտ), թողնել մեկ կիսամյակ «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» (2կրեդիտ, 1-ին կիսամյակ, ստուգարք), իսկ երկրորդ կիսամյակում ավելացնել «Քիմիա» ԿԾ «Մաթեմատիկան քիմիկոսների համար» դասընթացը (2կրեդիտ, 2-րդ կիսամյակ, առանց ընթացիկ քննություն) և «Սննդի անվտանգություն» ԿԾ «Սննդի անվտանգության իրավական կարգավորման հիմունքներ» դասընթացը (2կրեդիտ, 2-րդ կիսամյակ, առանց ընթացիկ քննություն):

Նմանատիպ փոփոխություն իրականացնել 3-րդ և 4-րդ կիսամյակներում նախատեսված «Հայոց պատմություն» դասընթացի (2*2կրեդիտ) հետ, թողնել մեկ

կիսամյակ՝ վերանվանելով «Հայոց պատմության հիմնահարցեր» (2կրեդիտ, 3-րդ կիսամյակ, ստուգարք), իսկ 4-րդ կիսամյակում երկու ԿԾ-ներում ավելացնել «Արհեստական բանականություն» դասընթացը (2կրեդիտ, 4-րդ կիսամյակ, ստուգարք):

Որոշեցին - Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը քվեարկության միաձայն կողմ արդյունքով հաստատեցին «Քիմիա» ԿԾ «Մաթեմատիկան քիմիկոսների համար» դասընթացը: Քվեարկության (14 կողմ, 1 դեմ, 1 ձեռնպահ) արդյունքով հաստատեց «Սննդի անվտանգություն» ԿԾ «Սննդի անվտանգության իրավական կարգավորման հիմունքներ» դասընթացը: Քվեարկության (12 կողմ, 4 դեմ) արդյունքով հաստատեց 4-րդ կիսամյակում երկու ԿԾ-ներում ավելացնել «Արհեստական բանականություն» դասընթացը Քվեարկության արդյունքում որոշեցին հաստատել «Քիմիա» ԿԾ և «Սննդի անվտանգություն» ԿԾ բակալավրիատի 2026-2030 ուստարվա ուսումնական պլաններում կատարվող փոփոխությունները:

Ա.Ս.Գալստյան - 3.«Դասախոսը ուսանողի աչքերով» սոցոլոգիական հարցումների արդյունքների քննարկում (1-ին կիսամյակի արդյունքների քննարկում): - Հարցումների տվյալները ուղարկված են ամբիոնի վարիչներին և դասախոսներին: Այս կիսամյակ ուսանողները ավելի ակտիվ են մասնակցել հարցմանը՝ երևում է ՈՒԽ-ի աշխատանքի արդյունքը: Սակայն պետք է հորդորեմ, որ ուսանողները ներկայացնեն նաև հարակից մեկնաբանություններ, որպեսզի հասկանանք ռեալ պատկերը և իրականացնենք փոփոխություններ: Օրինակ Գրասենյակի աշխատանքը գնահատվել է 3,81 միավոր: Տեսնելով գրասենյակի կատարած աշխատանքը՝ կարծում եմ գնահատականը իրական չէ, կամ թող նշեն թերությունը, որով պայմանավորված է գնահատականը:

Նիստի նախագահ,

Քիմիայի ֆակուլտետի դեկան Ա.Ս.Գալստյան

Նիստի քարտուղար,

Դոցենտ Մ.Ա.Սամվելյան